ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն թիվ 1 հասցեում գտնվող պուրակի քանդման, մաքրման և բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/28 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի ապրիլի 14-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/28 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի 6 մայիս-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ Մեծամորի համայնքապետարանի և «Բամբ Շին» ՍՊԸ և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ կոնսորցիումի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի 6 մայիս-ին կատարված փոփոխությունների արդյունքում Պայմանագրի Հավելված 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը՝ փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ, համաձայն՝ համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2026 թվականի ապրիլի 14-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/28 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.16 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**